# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԴՐԱՄԱՆԻՇԵՐԸ




# NOTES AND COINS

## OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն  Բ Ա Ն Կ




*Նվիրվում է հայկական դրամի 20-ամյակին*

CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA

*Dedicated to the 20th anniversary of Armenian dram*


50000
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ԱՍՏՎԱԾ ԸՆԴ ՄԵԶ Է
301
2001
5000 ԴՐԱՄ
1600 ANNIVERSARY OF ARM
10000 ԴՐԱՄ
TIGRAN THE GREAT
Adoration of the Magi
VA



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՆԻՇԵՐԸ

# NOTES AND COINS

## OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆ 2013 YEREVAN


2008
1000000
ԴՐԱՄ
REPUBLIC OF ARMENIA
50

# ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻ 20 ՏԱՐԻՆ

Հայկական դրամանիշերի թողարկման պատմությունը սկիզբ է առնում անտիկ ժամանակաշրջանից: Ամենավաղ հայկական դրամները թվագրվում են Ք. ա. III դարի երկրորդ կեսով: Դարեր շարունակ հայկական մետաղադրամներն առանձնանում էին պատկերավորման և դրվագման բարձր որակով: Կարելի է հիշատակել Արտաշեսյան հարստության (Ք. ա. 189 թ. - Ք. հ. 6 թ.), իսկ ավելի ուշ՝ միջնադարում, Կիլիկիայի հայկական պետության մետաղադրամները:

Թղթադրամները Հայաստանում հայտնվել են 20-րդ դարի սկզբին: Մինչև 1917 թ. դրանք Ռուսական կայսրության թղթադրամներն էին, իսկ 1918 թ. փետրվարին Անդրկովկասյան կոմիսարիատը շրջանառության մեջ է դնում իր դրամանիշերը՝ բոնները: 1918 թ. անկախ հռչակված Հայաստանի Առաջին Հանրապետությունը 1919 թ. շրջանառության մեջ է դնում Պետբանկի Երևանյան բաժանմունքի չեկերը: 1920 թ. ամռանը շրջանառության մեջ են դրվում 1919 թ. թվագրված թղթադրամները, որոնք լիովին համապատասխանում էին այդ տարիների արտադրության որակական պահանջներին: 1921-1922 թթ. շրջանառության մեջ էին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, 1923 թ.՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայի թողարկումները, իսկ սկսած 1924 թ-ից՝ Խորհրդային Միության միասնական նմուշի դրամանիշերը: Այս դրամական թողարկումները (թղթադրամներ և մետաղադրամներ) բազմիցս փոփոխվել են ողջ Խորհրդային Միության տարածքում: Պետք է նշել, որ դրանցից երեքը՝ «Երկրաշարժ» (1989 թ.), «Մատենադարան» (1990 թ.), «Սասունցի Դավիթ» (1991 թ.) մետաղադրամները նվիրված են Հայաստանին և հայկական մշակույթին:

1991 թ. սեպտեմբերի 21-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Այս իրողությունն առաջ բերեց ազգային արժույթ ունենալու անհրաժեշտություն: 1992 թ. մարտի 27-ին որոշվեց Հայաստանի ազգային արժույթի անվանումը՝ «դրամ», և պատրաստվեցին առաջա թղթադրամների էսքիզները: 1993 թ. նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվեցին առաջին շարքի թղթադրամները՝ 10, 25, 50, 100, 200 և 500 դրամ անվանական արժեքներով: 1994 թ. թղթադրամների շարքը համալրվեց

1 000 դրամ, իսկ ավելի ուշ՝ 1995 թ., 5 000 դրամ անվանական արժեքներով թղթադրամներով: Թղթադրամներին պատկերված են Հայաստանի ինչպես ժամանակակից, այնպես էլ պատմական ճարտարապետական և մշակութային կոթողներ:

Առաջին շարքի թղթադրամների և մետաղադրամների ուրվագծման աշխատանքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, ըստ էության, սկիզբ դրեց հայկական մշակութային ու պատմական ժառանգությունը դրամանիշերի վրա ներկայացնելու ավանդույթին: Առաջին շարքի թղթադրամները շրջանառության մեջ մնացին մինչև 2005 թ., թեև դեռևս 1995 թ-ից տարվում էին նոր շարքի թղթադրամների մշակման աշխատանքներ: Թղթադրամների դիզայնի հայեցակարգը որոշակի փոփոխություններ կրեց. կատարելագործվեցին թղթադրամների տեխնիկական բնութագրերը՝ դրանք ավելի մոտեցնելով միջազգային չափանիշներին և համաշխարհային արդի միտումներին: Առաջին շարքի թղթադրամներին փոխարինած երկրորդ շարքի թղթադրամները պատկերում են Հայաստանի մշակույթի և պատմական ժառանգության մեջ անգնահատելի հետք թողած առավել հայտնի անձանց դիմանկարները:

1999-2010 թթ. շրջանառության մեջ են եղել 50, 100, 500, 1 000, 5 000, 10 000, 20 000, 100 000 դրամ անվանական արժեքներով թղթադրամները, որոնցից առաջին երկուսը այսօր չեն շրջանառվում:

2001 թ. հունիսի 4-ին ՀՀ տարածքում շրջանառության մեջ է դրվել 50 000 դրամ անվանական արժեքով առաջին հոբելյանական թղթադրամը՝ նվիրված Հայաստանում Քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Թղթադրամի ձևավորումը տարբերվում է երկրորդ շարքի թղթադրամների ընդհանուր հայեցակարգից:

Երկրորդ շարքի թղթադրամները, այդ թվում՝ հոբելյանականը, վերաթողարկվել են՝ պահպանելով ընդհանուր ձևավորումը և գրառումները: Վերաթողարկումների ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում թղթադրամների պաշտպանվածությունը բարելավելուն և դրանց որակը բարձրացնելուն: Ներդրվել են ժամանակակից պաշտպանական տեխնոլոգիաների գործնականում բոլոր նվաճումները՝ լատեքսում, հոլոգրամների, երանգափոխ ներկերի կիրառում և այլն: Հայկական թղթադրամներում կիրառվում են մինչև 17 պաշտպանական հատկանիշներ, ինչի շնորհիվ բավարարվում են ժամանակակից թղթադրամների տպագրության պահանջները:

Ծավալուն աշխատանք է կատարվել 1 000, 5 000, 10 000 և 20 000 դրամ անվանական արժեքներով թղթադրամների տպագրության համար: Օպտիմալացվել և համախմբվել են ձևավորման բոլոր տարրերը. ժամանակակից պաշտպանական բաղադրիչներ են հայտնվել նաև թղթադրամների դարձերեսին: Այս աշխատանքը միջազգային բարձր գնահատականի է արժանացել, մասնավորապես՝ 2011 թ. Սինգապուրում տեղի ունեցած թղթադրամների միջազգային համաժողովում նման մոտեցումը համարվել է տեղին և արդյունավետ:

Ժամանակակից դրամաշրջանառության բաղադրիչ են նաև շրջանառու մետաղադրամները: Մետաղադրամների առաջին շարքը՝ 10, 20, 50 լումա և 1, 3, 5, 10 դրամ անվանական արժեքներով մետաղադրամները թողարկվել են 1994 թ.: 2003 թ-ից սկսած թողարկվել են երկրորդ շարքի մետաղադրամները՝ 10, 20, 50, 100, 200, 500 դրամ անվանական արժեքներով: Այդ շարքի ամենաբարձր անվանական արժեքը՝ 500 դրամը, թողարկվել է նույն անվանական արժեքով թղթադրամը մետաղադրամով փոխարինելու նպատակով: Մետաղադրամները՝ բացառությամբ 10, 20, 50 լումա և 1, 3, 5 դրամ անվանական արժեքներով մետաղադրամների, որոնք արագ կորցրեցին իրենց արդիականությունը հաճախադեպ բարձր գնաճային գործընթացների պատճառով, հասվել են մի քանի անգամ: Սակայն, ի տարբերություն թղթադրամների, մետաղադրամների տեխնիկական բնութագրերը նոր հատումների արդյունում մնացել են միանգամայն նույնը՝ բացառությամբ 2004 թ. նմուշի 10 դրամ անվանական արժեքով մետաղադրամի: Վերջինս դիզայնով և տեխնիկական բնութագրով տարբերվում է 1994 թ. նմուշի նույն մետաղադրամից:

1996-1997 թթ. առաջին անգամ թողարկվեցին ողնձի և նիկելի համաձուլվածքի երկու՝ հիշատակային և հոբելյանական շրջանառու մետաղադրամներ՝ նվիրված Շախմատի 32-րդ օլիմպիադային և Եղիշե Չարենցի ծննդյան 100-ամյակին, ինչպես նաև Անահիտ աստվածուհուն նվիրված ոսկե մետաղադրամ: 2012 թ., շրջանառու հիշատակային մետաղադրամների հաջորդ թողարկմամբ, նոր և հետաքրքիր մոտեցում կիրառվեց. ի թիվս սանդրաս նմուշի 50-դրամանոց շրջանառու մետաղադրամների՝ թողարկվեցին նույնական բնութագրերով 50 դրամ անվանական արժեքով հիշատակային մետաղադրամներ՝ նվիրված Հայաստանի 10 մարզերին և քաղաքամայր Երևանին: Այդ մետաղադրամների դիմերեսին դրվագված են յուրաքանչյուր մարզին առավելապես բնորոշ պատկերներ:

Բոլոր շրջանառու հիշատակային մետաղադրամները միաժամանակ շրջանառության մեջ են սանդրաս մետաղադրամների հետ և դրամանիշերի հավաքորդների շրջանում մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Ընդօրինակելով զարգացած երկրների փորձը (ԱՄՆ, Ավստրիա, Կանադա և այլ)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը սկսած 2011 թ-ից թողարկում է արծաթե ներդրումային դրամների շարք «Նոյյան Տապան»: Դրանք ներկայացված են 7 քաշային տարբերակներով՝ 1/4 տրոյան ունցիայից մինչև 5 կգ: Նախագծի նպատակն է՝ բնակչությանը հնարավորություն տալ ազատ միջոցները ներդնելու արծաթե մետաղադրամներում: Թեմայի ընտրությունը և գերազանց որակը նպաստեցին, որպեսզի մեկ տարվա ընթացքում վաճառվեր մետաղադրամների ավելի քան մեկ միլիոն օրինակ:

Պատմամշակութային կարևոր իրադարձություններին և հոբելյանների առթիվ անվանի մարդկանց նվիրված դրամանիշերի թողարկման հայեցակարգն առավել առարկայական և ակներև է արտացոլված հուշադրամների թողարկումներում: 1994 թ-ից թողարկվել են 170-ից

ավելի բարձրորակ հուշադրամներ. դրանք նվիրված են հայոց պետականությանը, հայ պանծալի հրամանատարներին, դրամանիշերի պատմությանը, Հայաստանի զինված ուժերի ձևավորմանը: Շատ հուշադրամներ, ի նշանավորումն հոբելյանական տարեթվերի, պատկերում են գիտության, գրականության, մշակույթի, սպորտի ականառու ներկայացուցիչների: Մեծ տեղ է հատկացվել հիմնական արժեքներին. դրանք հնագույն տաճարներն են, պատմական անցյալի հոգևոր արժեքները: Կենդանական և բուսական աշխարհի բազմազանությունն արտացոլված է Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված կենդանիներին և հազվագյուտ ու եզակի բույսերին նվիրված թողարկումներում:

Հայաստանում թողարկվող դրամանիշերի որակական հատկանիշների բարելավման ուղղությամբ տարվող ծրագրված և համակարգված աշխատանքը չէր կարող չարժանանալ միջազգային հանրության բարձր գնահատանքին: ՀՀ հուշադրամները միջազգային դրամագիտական ամենահեղինակավոր մրցույթներում արժանացել են մրցանակների:

Հայկական դրամի 20-ամյակին նվիրված այս հրատարակությունում ներկայացվել է նաև Հայաստանի դրամանիշերի թողարկումների առավել համապարփակ ցանկը: Հուսով ենք, որ այն գրավիչ և օգտակար կլինի ոչ միայն դրամագետների, այլև նրանց համար, ում հետաքրքրում է Հայաստանը՝ իր պատմությամբ և մշակույթով:

# 20 YEARS OF ARMENIAN DRAM

The history of Armenian monetary issues dates back to the ancient period. The earliest of these are dated for the second half of the 3rd century BC. For many centuries, the Armenian coins stood out for high quality of design and coinage. Coins of the Artashesian Dynasty (189 BC - 6 AD) and coins of the Armenian state of Cilicia in the Middle Ages are good examples.

Paper money appeared in Armenia in the early 20th century. Until 1917 it was the monetary issues of the Russian Empire, and from February 1918, bonds of the Transcaucasia Commissariat. Proclaimed independent in 1918, the Republic of Armenia introduced checks issued by Erivan Branch of the State Bank in 1919, and in the summer of 1920 it introduced banknotes of the 1919 issue, which were fully consistent with production quality requirements generally accepted at the time. In 1921-1922 issues of the Soviet Socialist Republic of Armenia were circulating; in 1923 issues of the Transcaucasia Federation, and since 1924 single sample USSR banknotes and coins were in circulation. Those monetary issues had changed many times throughout the Soviet Union. It should be noted that some of them - coins "Earthquake" (1989), "Matenadaran" (1990) and "David of Sasun" (1991) - were devoted to Armenia and Armenian culture.

On September 21, 1991 Armenia was proclaimed as an independent republic. On this occasion there arouse a need to create a national currency. On 27th March 1992 the name was chosen for the Armenian currency, the Dram, and sketches of the future banknotes were prepared. The first series of banknotes of 10, 25, 50, 100, 200 and 500 dram entered into circulation on 22 November, 1993. Then, in 1994 banknote series was added with the banknote of 1 000 dram denomination, and later, in 1995, with 5 000 dram banknote. The design of the banknotes contained images of modern and historic, architectural and cultural monuments of Armenia.

While working on the first series of banknotes, the Central Bank of the Republic of Armenia actually started a tradition of representing on them the most important aspects of the Armenian cultural and historical heritage. Banknotes of the first series circulated until 2005, although since 1995, work began on the development of a new, second series of banknotes. The design concept changed definitely. Banknotes became more sophisticated in terms of technical parameters: they were more in line with international standards and the latest international trends. The banknotes which replaced the first series began portraying the most famous personalities who have left an invaluable imprint on the culture and historical heritage of Armenia.

In the period from 1999 to 2010 banknotes of 50, 100, 500, 1 000, 5 000, 10 000, 20 000, 100 000 dram were in circulation. The first two of them are not circulating nowadays.

On the 4th of June 2001 the first commemorative banknote of 50 000 dram to celebrate the 1700th anniversary of the adoption of Christianity as state religion in Armenia was issued. The design of the banknote was different from the general concept adopted for the second series of the Armenian banknotes. The banknotes of the second series, including the commemorative one, were re-issued in the form of reprints, keeping with the overall design as well as inscriptions. In the process of reprinting particular attention was paid to improving the security of banknotes and bettering their overall quality. Nearly all the achievements of modern security technologies - varnishing, use of holograms, OVI, etc. - were introduced. The number of security features at the moment reaches 17, which is why the Armenian banknotes are able to meet the highest standards accepted in security printing.

The most important work was done during the last reprint of banknotes of 1 000, 5 000, 10 000 and 20 000 dram banknotes. All design elements were optimized and consolidated; modern security features appeared not only on the obverse, but on the reverse of the banknotes as well. This work has earned high praise of international community. In particular, at the international conference of banknotes in Singapore in 2011 this approach was considered relevant and effective.

The current circulation is difficult to imagine without circulating coins. The first series of circulation coins was issued in Armenia in 1994. Those were the coins with nominal value of 10, 20, 50 luma and 1, 3, 5, 10 dram. Furthermore, since 2003, the second series coins with nominal value of 10, 20, 50, 100, 200, 500 dram were issued. The highest nominal value of the series, 500 dram, was issued in order to replace banknotes of the same nominal value. All the coins, except for 10, 20, 50 luma and 1, 3, 5 dram, which quickly lost their relevance due to high inflation at the time, were struck several times. However, unlike

banknotes, coins specifications for the new ones remained absolutely identical except for the coin of 10 dram of the 2004 issue; by design and technical characteristics this one is totally different from the coin of the 1994 issue.

In 1996-1997, circulation commemorative coins (two copper-nickel coins dedicated to the 32nd Chess Olympiad and the 100th anniversary of the birth of Charents, and a gold coin dedicated to the goddess Anahit) were issued for the first time. The next issue of commemorative coins in 2012 was noteworthy as an interesting and modern concept was being first implemented. In addition to 50 dram circulation coins with standard design, commemorative coins with identical specifications were issued in dedication to the 10 regions of Armenia and the Armenian capital Yerevan. The obverse of these coins depicted the most typical images associated with the regions they represent.

All commemorative coins are in circulation on a par with the standard ones and are a good source of increased interest among collectors.

In pursuit of learning from the experience of countries such as the United States, Austria, Canada, etc., starting 2011 the Central Bank of Armenia has been issuing silver bullion coins of the series "Noah's Ark". These coins represent 7 weight categories - from 1/4 oz to 5 kg. The purpose of the project is to provide opportunities for households to invest their extra money in silver coins. A well-chosen theme of the issue as well as excellent quality made it possible to sell over million pieces of these coins in just a year.

The concept of reflecting most important cultural and historical aspects on banknotes and coins is most clearly and vividly realized in the issuance of collector coins. From 1994 to date, more than 170 high-quality collector coins have been issued. These coins are dedicated to the Armenian state, great Armenian generals, history of Armenian currency, formation of the Armed Forces of Armenia. Many coins have also been issued to commemorate birth anniversaries of renowned people of science, literature, culture, and sports. Much attention is given to Christian values: these are ancient temples and churches, and spiritual values of the past. The diversity of animal and plant life is reflected in the issues that deal with rare and unique species of fauna and flora of Armenia.

Planned and systematic work to improve the quality of the banknotes and coins in Armenia could not be left unappreciated. Many issues have won awards at the most prestigious international numismatic forums.


This book, dedicated to the 20th anniversary of Armenian dram, contains the most comprehensive list of issues of notes and coins of Armenia. We hope that this work will be interesting and useful not only for numismatists, but also for those who takes interest in Armenia with its rich culture and history.


50000
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԱՆ
1700
50000
ԷԱ0483243
ԷԱ0483243


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
10000


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
5000
Թ0472084 8
1869-1923


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
100000
ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԸ

# BANKNOTES
## OF THE REPUBLIC OF ARMENIA

## Ի ՇԱՐՔ
## I SERIES







## 10 դրամ *(1993 թ. նմուշի)*

Դիմերես՝ Երևանի երկաթուղային կայարանի շենքը,
Սասունցի Դավթի արձանը և զարդանախշեր:
Դարձերես՝ Արարատ լեռը և զարդանախշեր:
Չափը՝ 62 x 125 մմ:
Հիմնական գույները՝ շագանակագույն, մանուշակագույն:
Ջրանիշը՝ ՀՀ զինանշանի ուրվագծի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԱԱ:
Ստորագրությունները՝ Իսահակ Իսահակյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Ջանիկ Ջանոյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակներ՝ Հրաչյա Ասլանյան և Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է եղել 22. 11. 1993 թ. մինչև 01. 04. 2004 թ.:

## 10 dram *(1993 issue)*

Obverse: Yerevan Railway Station, monument to David of Sasoun and ornament.
Reverse: the Mountain Ararat and ornament.
Size: 62 x 125 mm.
Main colors: brown, violet.
Watermark: recurring contour of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԱԱ.
Signatures: Isahak Isahakyan - CBA Chairman,
Janik Janoyan - RA Minister of Finance.
Designers: Hrachya Aslanyan and Ashot Manukyan.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation from 22. 11. 1993 to 01. 04. 2004.

## 25 դրամ *(1993 թ. նմուշի)*

Դիմերես՝ առյուծի որմնաքանդակ, սեղագիր քարի մի բեկոր
Էրեբունի ամրոցից (կառուցվել է Ք. ա. VIII դարում) և զարդանախշեր:
Դարձերես՝ զարդանախշեր:
Չափը՝ 62 x 125 մմ:
Հիմնական գույները՝ շագանակագույն, կապույտ:
Ջրանիշը՝ ՀՀ զինանշանի ուրվագծի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԲԱ:
Ստորագրությունները՝ Իսահակ Իսահակյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Լևոն Բարխուդարյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակներ՝ Հրաչյա Ասլանյան և Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է եղել 22. 11. 1993 թ. մինչև 01. 04. 2004 թ.:

## 25 dram *(1993 issue)*

Obverse: lion fresco, stone with cuneiform writing from the Erebuni fortress (8th century BC) and ornament.
Reverse: ornament.
Size: 62 x 125 mm.
Main colors: brown, blue.
Watermark: recurring contour of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԲԱ.
Signatures: Isahak Isahakyan - CBA Chairman,
Levon Barkhudaryan - RA Minister of Finance.
Designers: Hrachya Aslanyan and Ashot Manukyan.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation from 22. 11. 1993 to 01. 04. 2004.












## 50 դրամ *(1993 թ. նմուշի)*

Դիմերես՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի ու Հայաստանի ազգային պատկերասրահի շենքը և զարդանախշեր:
Դարձերես՝ ՀՀ Ազգային ժողովի շենքը և զարդանախշեր:
Չափը՝ 62 x 125 մմ:
Հիմնական գույները՝ կապույտ, կարմիր:
Ջրանիշը՝ ՀՀ զինանշանի ուրվագծի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԳԱ:
Ստորագրությունները՝ Իսահակ Իսահակյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Լևոն Բարխուդարյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակներ՝ Հրաչյա Ասլանյան և Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է եղել 22. 11. 1993 թ. մինչև 01. 01. 2004 թ.:

## 50 dram *(1993 issue)*

Obverse: building of History State Museum and National Art Gallery of Armenia, and ornament.
Reverse: building of National Assembly of RA and ornament.
Size: 62 x 125 mm.
Main colors: blue, red.
Watermark: recurring contour of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԳԱ.
Signatures: Isahak Isahakyan - CBA Chairman,
Levon Barkhudaryan - RA Minister of Finance.
Designers: Hrachya Aslanyan and Ashot Manukyan.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation from 22. 11. 1993 to 01. 01. 2004.

## 100 դրամ *(1993 թ. նմուշի)*

Դիմերես՝ Զվարթնոցի տաճարը (641-661 թթ.), Արարատ լեռը և զարդանախշեր:
Դարձերես՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը և զարդանախշեր:
Չափը՝ 65 x 135 մմ:
Հիմնական գույնը՝ մանուշակագույն:
Ջրանիշը՝ ա) ՀՀ զինանշանի ուրվագծի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԴԱ:
բ) ՀՀ զինանշանի ուրվագծի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԴԲ:
գ) ՀՀ զինանշանի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԴԲ:
Ստորագրությունները՝ Իսահակ Իսահակյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Լևոն Բարխուդարյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակներ՝ Հրաչյա Ասլանյան և Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է եղել 22. 11. 1993 թ. մինչև 01. 01. 2004 թ.:

## 100 dram *(1993 issue)*

Obverse: Zvartnots Cathedral (641-661), the Mountain Ararat and ornament.
Reverse: building of A. Spendiarian National Academic State Theatre of Opera and Ballet, and ornament.
Size: 65 x 135 mm.
Main color: violet.
Watermark: a) recurring contour of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԴԱ.
b) recurring contour of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԴԲ.
c) recurring image of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԴԲ.
Signatures: Isahak Isahakyan - CBA Chairman,
Levon Barkhudaryan - RA Minister of Finance.
Designers: Hrachya Aslanyan and Ashot Manukyan.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation from 22. 11. 1993 to 01. 01. 2004.












## 200 դրամ *(1993 թ. նմուշի)*

Դիմերես՝ Սբ. Հռիփսիմե եկեղեցին (618 թ.) և զարդանախշեր:
Դարձերես՝ զարդանախշեր:
Չափը՝ 65 x 135 մմ:
Հիմնական գույները՝ շագանակագույն, կանաչ, կարմիր, դեղին:
Ջրանիշը՝ ա) ՀՀ զինանշանի ուրվագծի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԵԱ:
բ) ՀՀ զինանշանի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԵԲ:
Ստորագրությունները՝ Իսահակ Իսահակյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Լևոն Բարխուդարյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակներ՝ Հրաչյա Ասլանյան և Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է եղել 22. 11. 1993 թ. մինչև 01. 04. 2004 թ.:

## 200 dram *(1993 issue)*

Obverse: Church of St. Hripsime (618) and ornament.
Reverse: ornament.
Size: 65 x 135 mm.
Main colors: brown, green, red, yellow.
Watermark: a) recurring contour of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԵԱ.
b) recurring image of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԵԲ.
Signatures: Isahak Isahakyan - CBA Chairman,
Levon Barkhudaryan - RA Minister of Finance.
Designers: Hrachya Aslanyan and Ashot Manukyan.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation from 22. 11. 1993 to 01. 04. 2004.

## 500 դրամ *(1993 թ. նմուշի)*

Դիմերես՝ Տիգրան Մեծ արքայի (Ք. ա. 95-55 թթ.)
արծաթե դրամը, Արարատ լեռը և զարդանախշեր:
Դարձերես՝ բացված գիրք, փետրագրիչ և զարդանախշեր:
Չափը՝ 65 x 135 մմ:
Հիմնական գույները՝ կանաչ, շագանակագույն, կապույտ:
Ջրանիշը՝ ա) ՀՀ զինանշանի ուրվագծի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԶԱ:
բ) ՀՀ զինանշանի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԶԲ:
Ստորագրությունները՝ Իսահակ Իսահակյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Լևոն Բարխուդարյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակներ՝ Հրաչյա Ասլանյան և Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է եղել 1994 թ. մարտից մինչև 01. 09. 2005 թ.:

## 500 dram *(1993 issue)*

Obverse: the coin of the Armenian King Tigran the Great
(95-55 BC), the Mountain Ararat and ornament.
Reverse: open book, quill and ornament.
Size: 65 x 135 mm.
Main colors: green, brown, blue.
Watermark: a) recurring contour of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԶԱ.
b) recurring image of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԶԲ.
Signatures: Isahak Isahakyan - CBA Chairman,
Levon Barkhudaryan - RA Minister of Finance.
Designers: Hrachya Aslanyan and Ashot Manukyan.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation from March 1994 to 01. 09. 2005.












## 1 000 դրամ *(1994 թ. նմուշի)*

Դիմերես՝ Մեսրոպ Մաշտոցի արձանը,
Մատենադարանի շենքը և զարդանախշեր:
Դարձերես՝ Աղուդի գյուղի կոթող-հուշարձանը (VI-VII դդ.) և
զարդանախշեր:
Չափը՝ 68 x 145 մմ:
Հիմնական գույները՝ շագանակագույն, նարնջագույն:
Ջրանիշը՝ ՀՀ զինանշանի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԹԱ:
Ստորագրությունները՝ Բագրատ Ասատրյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Լևոն Բարխուդարյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է եղել 24. 10. 1994 թ. մինչև 01. 03. 2004 թ.:

## 1 000 dram *(1994 issue)*

Obverse: monument to Mesrop Mashtots, building of
Matenadaran and ornament.
Reverse: obelisk-monument of village Aghudi (6-7th centuries) and ornament.
Size: 68 x 145 mm.
Main colors: brown, orange.
Watermark: recurring image of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԹԱ.
Signatures: Bagrat Asatryan - CBA Chairman,
Levon Barkhudaryan - RA Minister of Finance.
Designer: Ashot Manukyan.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation from 24. 10. 1994 to 01. 03. 2004.

## 5 000 դրամ *(1995 թ. նմուշի)*

Դիմերես՝ Գառնիի հեթանոսական տաճարը (I դար) և զարդանախշեր:
Դարձերես՝ Անահիտ աստվածուհու դիմանկարը և զարդանախշեր:
Չափը՝ 71 x 145 մմ:
Հիմնական գույները՝ կանաչ, մանուշակագույն, դեղին:
Ջրանիշը՝ ՀՀ զինանշանի կրկնվող պատկեր:
Սերիան՝ ԷԱ:
Ստորագրությունները՝ Բագրատ Ասատրյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Լևոն Բարխուդարյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Հրաչյա Ասլանյան:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է եղել 06. 09. 1995 թ. մինչև 01. 07. 2005 թ.:

## 5 000 dram *(1995 issue)*

Obverse: pagan temple of Garni (1st century) and ornament.
Reverse: bust of the Goddess Anahit from pagan era and ornament.
Size: 71 x 145 mm.
Main colors: green, violet, yellow.
Watermark: recurring image of the coat of arms of the Republic of Armenia.
Series: ԷԱ.
Signatures: Bagrat Asatryan - CBA Chairman,
Levon Barkhudaryan - RA Minister of Finance.
Designer: Hrachya Aslanyan.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation from 06. 09. 1995 to 01. 07. 2005.






## II ՇԱՐՔ
## II SERIES







## 50 դրամ *(1998 թ. նմուշի)*

Դիմերես՝ Արամ Խաչատրյանի դիմապատկերը և Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը:
Դարձերես՝ դրվագ «Գայանե» բալետից,
Արարատ լեռը և նոտաների գրառումից մի հատված:
Չափը՝ 65 x 122 մմ:
Հիմնական գույները՝ վարդագույն, կապույտ:
Ջրանիշը՝ ՀՀ զինանշանի կրկնվող պատկեր:
Սերիան՝ Ա:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Էդվարդ Սանդոյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ De La Rue, Մեծ Բրիտանիա:
Շրջանառության մեջ է եղել 23. 11. 1998 թ. մինչև 01. 04. 2004 թ.:

## 50 dram *(1998 issue)*

Obverse: portrait of Aram Khachatryan and building of A. Spendiarian National Academic State Theatre of Opera and Ballet.
Reverse: fragment from ballet "Gayane", the Mountain Ararat and notes.
Size: 65 x 122 mm.
Main colors: pink, blue.
Watermark: recurring image of the coat of arms of the Republic of Armenia.
Series: Ա.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Eduard Sandoyan - RA Minister of Finance.
Designer: Ashot Manukyan.
Printer: De La Rue, Great Britain.
In circulation from 23. 11. 1998 to 01. 04. 2004.

## 100 դրամ *(1998 թ. նմուշի)*

Դիմերես՝ Վիկտոր Համբարձումյանի դիմապատկերը
Գալակտիկայի ոճավորված պատկերների և Արեգակնային համակարգի ֆոնի վրա:
Դարձերես՝ Բյուրականի աստղադիտարանը և դիտակը:
Չափը՝ 65 x 122 մմ:
Հիմնական գույները՝ կապույտ, վարդագույն:
Ջրանիշը՝ ՀՀ զինանշանի կրկնվող պատկեր:
Սերիան՝ Բ:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Էդվարդ Սանդոյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ De La Rue, Մեծ Բրիտանիա:
Շրջանառության մեջ է եղել 23. 11. 1998 թ. մինչև 01. 04. 2004 թ.:

## 100 dram *(1998 issue)*

Obverse: portrait of Viktor Ambartsumian against the background of the stylized images of the Galaxy and the Solar system.
Reverse: building of Byurakan observatory and a telescope.
Size: 65 x 122 mm.
Main colors: blue, pink.
Watermark: recurring image of the coat of arms of the Republic of Armenia.
Series: Բ.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Eduard Sandoyan - RA Minister of Finance.
Designer: Ashot Manukyan.
Printer: De La Rue, Great Britain.
In circulation from 23. 11. 1998 to 01. 04. 2004












## 500 դրամ *(1999 թ. նմուշի)*

Դիմերես՝ Ալեքսանդր Թամանյանի դիմապատկերը և Երևանի հատակագիծը:
Դարձերես՝ ՀՀ կառավարության շենքը:
Չափը՝ 72 x 129 մմ:
Հիմնական գույները՝ մոխրագույն, կարմիր:
Ջրանիշը՝ Ալեքսանդր Թամանյանի դիմապատկերը և անվանական արժեքի թվանիշը:
Սերիան՝ Գ:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Լևոն Բարխուդարյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ Joh. Enschede, Նիդեռլանդներ:
Շրջանառության մեջ է 01. 09. 2000 թ.:

## 500 dram *(1999 issue)*

Obverse: portrait of Alexander Tamanyan and Yerevan site drawing.
Reverse: The Government Building of the Republic of Armenia.
Size: 72 x 129 mm.
Main colors: grey, red.
Watermark: portrait of Alexander Tamanyan and nominal value.
Series: Գ.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Levon Barkhudaryan - RA Minister of Finance.
Designer: Ashot Manukyan.
Printer: Joh. Enschede, Netherlands.
In circulation since 01. 09. 2000.

## 1 000 դրամ *(1999 թ. նմուշի)*

Դիմերես՝ Եղիշե Չարենցի դիմապատկերը:
Դարձերես՝ Երևանի Հանրապետության փողոցի շենքերից մեկը և ֆայտոն:
Չափը՝ 72 x 136 մմ:
Հիմնական գույնը՝ կանաչ:
Ջրանիշը՝ Եղիշե Չարենցի դիմապատկերը և անվանական արժեքի թվանիշը:
Սերիան՝ Դ:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Էդվարդ Սանդոյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ De La Rue, Մեծ Բրիտանիա:
Շրջանառության մեջ է 01.03.1999 թ.:

## 1 000 dram *(1999 issue)*

Obverse: Portrait of Yeghishe Charents.
Reverse: building at Hanrapetutyan street of Yerevan and a horse carriage.
Size: 72 x 136 mm.
Main color: green.
Watermark: portrait of Yeghishe Charents and nominal value.
Series: Դ.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Eduard Sandoyan - RA Minister of Finance.
Designer: Ashot Manukyan.
Printer: De La Rue, Great Britain.
In circulation since 01.03.1999.






## 1 000 դրամ *(2001 թ. նմուշի)*

Սերիան՝ Լ:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ OeBS, Ավստրիա:
Շրջանառության մեջ է 01. 07. 2002 թ.:

## 1 000 dram *(2001 issue)*

Series: L.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Printer: OeBS, Austria.
In circulation since 01. 07. 2002.









## 1 000 դրամ *(2001 թ. նմուշի)*

Սերիան՝ Թ:
Ստորագրությունները՝
Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:




## 1 000 dram *(2001 issue)*

Series: Թ.
Signatures:
Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Printer: Giesecke & Devrient, Germany.




## 1 000 դրամ *(2011 թ. նմուշի)*

Սերիան՝ ԱԱ:
Ստորագրությունները՝
Արթուր Ջավադյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Տիգրան Դավթյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Joh. Enschede, Նիդեռլանդներ:
Շրջանառության մեջ է 30. 09. 2011 թ.:




## 1 000 dram *(2011 issue)*

Series: ԱԱ.
Signatures:
Arthur Javadyan - CBA Chairman,
Tigran Davtyan - RA Minister of Finance.
Printer: Joh. Enschede, Netherlands.
In circulation since 30. 09. 2011.







## 5 000 դրամ *(1999 թ. նմուշի)*

Դիմերես՝ Հովհաննես Թումանյանի դիմապատկերը և
ճարտարապետական հուշարձանի մի հատված:
Դարձերես՝ Լոռու բնապատկեր:
Չափը՝ 72 x 143 մմ:
Հիմնական գույները՝ կանաչ, դարչնագույն:
Ջրանիշը՝ Հովհաննես Թումանյանի դիմապատկերը և անվանական արժեքի թվանիշը:
Սերիան՝ Ե:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Լևոն Բարխուդարյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ Joh. Enschede, Նիդեռլանդներ:
Շրջանառության մեջ է 01. 07. 2000 թ.:

## 5 000 dram *(1999 issue)*

Obverse: portrait of Hovhannes Tumanyan and a part of
an architectural monument.
Reverse: picture depicting nature of Lori.
Size: 72 x 143 mm.
Main colors: green, brown.
Watermark: portrait of Hovhannes Tumanyan and nominal value.
Series: Ե.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Levon Barkhudaryan - RA Minister of Finance.
Designer: Ashot Manukyan.
Printer: Joh. Enschede, Netherlands.
In circulation since 01. 07. 2000.




## 5 000 դրամ *(2003 թ. նմուշի)*

Սերիան՝ Խ:
Ստորագրությունները՝
Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ OeBS, Ավստրիա:
Շրջանառության մեջ է 10. 07. 2003 թ.:




## 5 000 dram *(2003 issue)*

Series: Խ.
Signatures:
Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Printer: OeBS, Austria.
In circulation since 10. 07. 2003.




## 5 000 դրամ *(2003 թ. նմուշի)*

Սերիան՝ Ժ:
Ստորագրությունները՝
Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:




## 5 000 dram *(2003 issue)*

Series: Ժ.
Signatures:
Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Printer: Giesecke & Devrient, Germany.




## 5 000 դրամ *(2009 թ. նմուշի)*

Սերիան՝ ԲԱ:
Ստորագրությունները՝
Արթուր Ջավադյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Տիգրան Դավթյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է 11.01.2010 թ.:




## 5 000 dram *(2009 issue)*

Series: ԲԱ.
Signatures:
Arthur Javadyan - CBA Chairman,
Tigran Davtyan - RA Minister of Finance.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation since 11.01.2010.




## 5 000 դրամ *(2012 թ. նմուշի)*

Սերիան՝ ԲԲ:
Ստորագրությունները՝
Արթուր Ջավադյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վաչե Գաբրիելյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Joh. Enschede, Նիդեռլանդներ:
Շրջանառության մեջ է 25.06.2012 թ.:




## 5 000 dram *(2012 issue)*

Series: ԲԲ.
Signatures:
Arthur Javadyan - CBA Chairman,
Vache Gabrielyan - RA Minister of Finance.
Printer: Joh. Enschede, Netherlands.
In circulation since 25.06.2012.







## 10 000 դրամ *(2003 թ. նմուշի)*

Դիմերես՝ Ավետիք Իսահակյանի դիմապատկերը Արագած լեռան ֆոնի վրա:
Դարձերես՝ XX դարի սկզբի Գյումրի քաղաքից մի տեսարան:
Չափը՝ 72 x 150 մմ:
Հիմնական գույնը՝ մանուշակագույն:
Ջրանիշը՝ Ավետիք Իսահակյանի դիմապատկերը և անվանական արժեքի թվանիշը:
Սերիան՝ Ը:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ OeBS, Ավստրիա:
Շրջանառության մեջ է 01. 11. 2003 թ.:

## 10 000 dram *(2003 issue)*

Obverse: portrait of Avetik Isahakyan against the background of the Mountain Aragats.
Reverse: view of Gyumri of the beginnig of 20th century.
Size: 72 x 150 mm.
Main color: violet.
Watermark: portrait of Avetik Isahakyan and nominal value.
Series: Ը.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Designer: Ashot Manukyan.
Printer: OeBS, Austria.
In circulation since 01. 11. 2003.







## 10 000 դրամ *(2006 թ. նմուշի)*

Սերիան՝ Ծ:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է 31. 05. 2006 թ.:

## 10 000 dram *(2006 issue)*

Series: Ծ.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation since 31. 05. 2006.




## 10 000 դրամ *(2008 թ. նմուշի)*

Սերիան՝ Կ:
Ստորագրությունները՝
Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Joh. Enschede, Նիդեռլանդներ:
Շրջանառության մեջ է 14. 04. 2008 թ.:




## 10 000 dram *(2008 issue)*

Series: Կ.
Signatures:
Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Printer: Joh. Enschede, Netherlands.
In circulation since 14. 04. 2008.




## 10 000 դրամ *(2012 թ. նմուշի)*

Սերիան՝ ԳԱ:
Ստորագրությունները՝
Արթուր Ջավադյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վաչե Գաբրիելյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Joh. Enschede, Նիդեռլանդներ:
Շրջանառության մեջ է 25. 06. 2012 թ.:




## 10 000 dram *(2012 issue)*

Series: ԳԱ.
Signatures:
Arthur Javadyan - CBA Chairman,
Vache Gabrielyan - RA Minister of Finance.
Printer: Joh. Enschede, Netherlands.
In circulation since 25. 06. 2012.







## 20 000 դրամ *(1999 թ. նմուշի)*

Դիմերես՝ Մարտիրոս Սարյանի դիմապատկերը՝ նրա կտավներից մեկի ֆոնին:
Դարձերես՝ Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավից դրվագ:
Չափը՝ 72 x 150 մմ:
Հիմնական գույները՝ շագանակագույն, դեղին:
Ջրանիշը՝ Մարտիրոս Սարյանի դիմապատկերը և անվանական արժեքի թվանիշը:
Սերիան՝ Զ:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Էդվարդ Սանդոյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Աշոտ Մանուկյան:
Տպագրող՝ De La Rue, Մեծ Բրիտանիա:
Շրջանառության մեջ է 01.03.1999 թ.:

## 20 000 dram *(1999 issue)*

Obverse: portrait of Martiros Saryan against the background of one of his canvas.
Reverse: a fragment from Martiros Saryan's landscape "Armenia".
Size: 72 x 150 mm.
Main colors: brown, yellow.
Watermark: portrait of Martiros Saryan and nominal value.
Series: Զ.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Eduard Sandoyan - RA Minister of Finance.
Designer: Ashot Manukyan.
Printer: De La Rue, Great Britain.
In circulation since 01.03.1999.

## 20 000 դրամ *(2007 թ. նմուշի)*

Չափը՝ 72 x 155 մմ:
Սերիան՝ Է:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է 15. 06. 2007 թ.:

## 20 000 dram *(2007 issue)*

Size: 72 x 155 mm.
Series: Է.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation since 15. 06. 2007.






## 20 000 դրամ *(2009 թ. նմուշի)*

Չափը՝ 72 x 155 մմ:
Սերիան՝ ԴԱ:
Ստորագրությունները՝ Արթուր Ջավադյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Տիգրան Դավթյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է 11. 01. 2010 թ.:

## 20 000 dram *(2009 issue)*

Size: 72 x 155 mm.
Series: ԴԱ.
Signatures: Arthur Javadyan - CBA Chairman,
Tigran Davtyan - RA Minister of Finance.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation since 11. 01. 2010.






## 20 000 դրամ *(2012 թ. նմուշի)*

Չափը՝ 72 x 155 մմ:
Սերիան՝ ԴԲ:
Ստորագրությունները՝ Արթուր Ջավադյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վահե Գաբրիելյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Joh. Enschede, Նիդեռլանդներ:
Շրջանառության մեջ է 25. 06. 2012 թ.:

## 20 000 dram *(2012 issue)*

Size: 72 x 155 mm.
Series: ԴԲ.
Signatures: Arthur Javadyan - CBA Chairman,
Vache Gabrielyan - RA Minister of Finance.
Printer: Joh. Enschede, Netherlands.
In circulation since 25. 06. 2012.












## 50 000 դրամ *(2001 թ. նմուշի)*

Հոբելյանական թղթադրամ՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:
Դիմերես՝ Սբ. Էջմիածնի Մայր տաճարը և կամարի հատված:
Դարձերես՝ Արարատ լեռը, Կեչառիսի վանքի խաչքարերից մեկը և քրիստոնեությունը խորհրդանշող՝ եկեղեցու պատկերը Գրիգոր Լուսավորչի ու
Տրդատ Մեծ արքայի ձեռքերում:
Չափը՝ 79 x 160 մմ:
Հիմնական գույները՝ շագանակագույն, մոխրագույն:
Ջրանիշը՝ մեկ մեծ և երկու փոքր խաչերի պատկերներ:
Սերիան՝ ԷԱ:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Էսքիզների հեղինակ՝ Ռուբեն Արուչյան:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:
Շրջանառության մեջ է 04. 06. 2001 թ.:

## 50 000 dram *(2001 issue)*

The jubilee banknote dedicated to the 1700th anniversary of proclaiming Christianity in Armenia as state religion.
Obverse: the Mother Cathedral of Holy Etchmiadzin and a part of the arch.
Reverse: the Mountain Ararat, a cross-stone from Kecharis and a symbol of Christianity - Armenian Church in the hands of St Gregory the Illuminator and King Trdat the Great.
Size: 79 x 160 mm.
Main colors: brown, grey.
Watermark: one big and two small crosses.
Series: ԷԱ.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Designer: Ruben Arutchyan.
Printer: Giesecke & Devrient, Germany.
In circulation since 04. 06. 2001.

## 50 000 դրամ *(2001 թ. նմուշի)*

Սերիան՝ ԷԲ:
Ստորագրությունները՝ Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Վարդան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:
Տպագրող՝ Giesecke & Devrient, Գերմանիա:

## 50 000 dram *(2001 issue)*

Series: ԷԲ.
Signatures: Tigran Sargsyan - CBA Chairman,
Vardan Khachatryan - RA Minister of Finance.
Printer: Giesecke & Devrient, Germany.









## 100 000 dram *(2009 issue)*

Obverse: Portrait of King Abgar V and a fragment from the 1st century regional map.
Reverse: the disciple Thaddeus handing
the canvas with imprinted portrait of Jesus to King Abgar V.

Size: 72 x 160 mm.
Main colors: blue, brown.
Watermark: Portrait of King Abgar V and nominal value.
Series: ՁԱ.

Signatures: Arthur Javadyan - CBA Chairman,
Tigran Davtyan - RA Minister of Finance.

Designer: Haroutiun Samuelian.
Printer: De La Rue, Great Britain.
In circulation since 24. 08. 2009.

*In 2010 the banknote took part in the competition "Best New Banknote or Banknote Series"organized by International Association of Currency Affairs (IACA) and won the second prize. In the same year the banknote won the third prize in the competition "Banknote of the year-2010" organized by the International Banknote Society (IBNS).*




## 100 000 դրամ *(2009 թ. հնուշի)*


Դիմերես՝ Աբգար Ե թագավորը և I դարի տարածաշրջանային fարտեզից հատված:
Դարձերես՝ Հիսուսի աշակերտ Թադեոսի կողմից Աբգար Ե թագավորին Քրիստոսի անձեռակերտ պատկերով դաստառակի փոխանցման տեսարանը:
Չափը՝ 72 x 160 մմ:
Հիմնական գույները՝ կապույտ, դարչնագույն:
Ջրանիշը՝ Աբգար Ե թագավորի դիմապատկերը և անվանական արժեքի թվանիշը:
Սերիան՝ ՁԱ:

Ստորագրությունները՝ Արթուր Չավաղյան՝ ՀՀ ԿԲ նախագահ,
Տիգրան Դավթյան՝ ՀՀ ֆինանսների նախարար:

Էսքիզների հեղինակ՝ Հարություն Սամուելյան:
Տպագրող՝ De La Rue, Մեծ Բրիտանիա:
Շրջանառության մեջ է 24. 08. 2009 թ.:

*Թղթադրամը 2010 թ. ներկայացվել է Արժութային հարցերով միջազգային ասոցիացիայի կողմից կազմակերպված «Լավագույն նոր թղթադրամ կամ թղթադրամների շարք» մրցույթին և արժանացել երկրորդ մրցանակի: Նույն թվականին ներկայացվել է նաև Թղթադրամների միջազգային հանրության կողմից կազմակերպված «Տարվա թղթադրամ» մրցույթին և արժանացել երրորդ մրցանակի:*


ԿՈՄԻՏԱՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՉԱՔԱՏՅԱՆ
1869
1935
50
ԴՐԱՄ
ԵՐԵՎԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA
20000
ԴՐԱՄ · DRAM
5000
ԴՐԱՄ
1000
ԴՐԱՄ
2010
1000
ԴՐԱՄ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐԸ

# COINS

OF THE REPUBLIC OF ARMENIA

# ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐ

# CIRCULATION COINS



Ի ՇԱՐՔ
I SERIES




## 10 լումա

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 1994 |
| Մետաղը | ալյումինե համաձուլվածք |
| Քաշը | 0,59 գ |
| Տրամագիծը | 16,0 մմ |
| Դրամաեզրը | հարթ |
| Շրջանառության մեջ է | 21. 02. 1994 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությունը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «10 ԼՈՒՄԱ», թողարկման տարեթիվը՝ «1994»:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

## 10 luma

| | |
|---|---|
| Year of issue | 1994 |
| Metal | aluminum alloy |
| Weight | 0,59 g |
| Diameter | 16,0 mm |
| Edge | even |
| In circulation since | 21. 02. 1994 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, inscription "ARMENIA" in Armenian.

Reverse: nominal value "10 LUMA", year of issue "1994".

Minted in the Mint of Poland.




## 20 լումա

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 1994 |
| Մետաղը | ալյումինե համաձուլվածք |
| Քաշը | 0,75 գ |
| Տրամագիծը | 18,0 մմ |
| Դրամաեզրը | հարթ |
| Շրջանառության մեջ է | 21. 02. 1994 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությունը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «20 ԼՈՒՄԱ», թողարկման տարեթիվը՝ «1994»:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

## 20 luma

| | |
|---|---|
| Year of issue | 1994 |
| Metal | aluminum alloy |
| Weight | 0,75 g |
| Diameter | 18,0 mm |
| Edge | even |
| In circulation since | 21. 02. 1994 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, inscription "ARMENIA" in Armenian.

Reverse: nominal value "20 LUMA", year of issue "1994."

Minted in the Mint of Poland.







## 50 լումա

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 1994 |
| Մետաղը | ալյումինե համաձուլվածք |
| Քաշը | 0,93 գ |
| Տրամագիծը | 20,0 մմ |
| Դրամատուրքը | հարթ |
| Շրջանառության մեջ է | 21. 02. 1994 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությունը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «50 ԼՈՒՄԱ», թողարկման տարեթիվը՝ «1994»:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

## 50 luma

| | |
|---|---|
| Year of issue | 1994 |
| Metal | aluminum alloy |
| Weight | 0,93 g |
| Diameter | 20,0 mm |
| Edge | even |
| In circulation since | 21. 02. 1994 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, inscription "ARMENIA" in Armenian.

Reverse: nominal value "50 LUMA", year of issue "1994".

Minted in the Mint of Poland.







## 1 դրամ

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 1994 |
| Մետաղը | ալյումինե համաձուլվածք |
| Քաշը | 1,39 գ |
| Տրամագիծը | 22,0 մմ |
| Դրամատուրքը | ատամնավոր |
| Շրջանառության մեջ է | 21. 02. 1994 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությունը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «1 ԴՐԱՄ», թողարկման տարեթիվը՝ «1994», հատվող ճյուղեր:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

## 1 dram

| | |
|---|---|
| Year of issue | 1994 |
| Metal | aluminum alloy |
| Weight | 1,39 g |
| Diameter | 22,0 mm |
| Edge | ribbed |
| In circulation since | 21. 02. 1994 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, inscription "ARMENIA" in Armenian.

Reverse: nominal value "1 DRAM", year of issue "1994" and crossed lops.

Minted in the Mint of Poland.




## 3 դրամ

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 1994 |
| Մետաղը | ալյումինե համաձուլվածք |
| Քաշը | 1,63 գ |
| Տրամագիծը | 24,0 մմ |
| Դրամատուրքը | ատամնավոր |
| Շրջանառության մեջ է | 21. 02. 1994 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությունը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «3 ԴՐԱՄ», թողարկման տարեթիվը՝ «1994», հատվող ճյուղեր:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

## 3 dram

| | |
|---|---|
| Year of issue | 1994 |
| Metal | aluminum alloy |
| Weight | 1,63 g |
| Diameter | 24,0 mm |
| Edge | ribbed |
| In circulation since | 21. 02. 1994 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, inscription "ARMENIA" in Armenian.

Reverse: nominal value "3 DRAM", year of issue "1994", crossed lops.

Minted in the Mint of Poland.




## 5 դրամ

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 1994 |
| Մետաղը | ալյումինե համաձուլվածք |
| Քաշը | 1,98 գ |
| Տրամագիծը | 26,0 մմ |
| Դրամատուրքը | հարթ |
| Շրջանառության մեջ է | 21. 02. 1994 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությունը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «5 ԴՐԱՄ», թողարկման տարեթիվը՝ «1994», հատվող ճյուղեր:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

## 5 dram

| | |
|---|---|
| Year of issue | 1994 |
| Metal | aluminum alloy |
| Weight | 1,98 g |
| Diameter | 26,0 mm |
| Edge | even |
| In circulation since | 21. 02. 1994 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, inscription "ARMENIA" in Armenian.

Reverse: nominal value "5 DRAM", year of issue "1994", crossed lops.

Minted in the Mint of Poland.







## 10 դրամ

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 1994 |
| Մետաղը | ալյումինե համաձուլվածք |
| Քաշը | 2,30 գ |
| Տրամագիծը | 28,0 մմ |
| Դրամատուրքը | հարթ |
| Շրջանառության մեջ է | 21. 02. 1994 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությունը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «10 ԴՐԱՄ», թողարկման տարեթիվը՝ «1994», հատվող ճյուղեր:

Հատվել է Լեհաստանի և Սլովակիայի դրամահատարաններում:

## 10 dram

| | |
|---|---|
| Year of issue | 1994 |
| Metal | aluminum alloy |
| Weight | 2,30 g |
| Diameter | 28,0 mm |
| Edge | even |
| In circulation since | 21. 02. 1994 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, inscription "ARMENIA" in Armenian.

Reverse: nominal value "10 DRAM", year of issue "1994" and crossed lops.

Minted in the Mint of Poland and the Mint of Slovakia.

II ՇԱՐՔ
II SERIES




## 10 դրամ

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 2004 |
| Մետաղը | ալյումինե համաձուլվածք |
| Քաշը | 1,30 գ |
| Տրամագիծը | 20,0 մմ |
| Դրամատուրքը | ատամնավոր |
| Շրջանառության մեջ է | 01. 12. 2004 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, թողարկման տարեթիվը՝ «2004», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «ՏԱՍԸ ԴՐԱՄ» բառերը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «10 ԴՐԱՄ», զարդանախշեր:

Էսքիզների հեղինակ՝ Կարապետ Աբրահամյան:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

## 10 dram

| | |
|---|---|
| Year of issue | 2004 |
| Metal | aluminum alloy |
| Weight | 1,30 g |
| Diameter | 20,0 mm |
| Edge | ribbed |
| In circulation since | 01. 12. 2004 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, year of issue "2004", inscriptions "REPUBLIC OF ARMENIA" and "TEN DRAM" in Armenian.

Reverse: nominal value "10 DRAM", ornament.

Designed by Karapet Abrahamyan.

Minted in the Mint of Poland.




## 20 դրամ

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 2003 |
| Մետաղը | պղնձապատ պողպատ |
| Քաշը | 2,75 գ |
| Տրամագիծը | 20,5 մմ |
| Դրամատուրքը | հարթ |
| Շրջանառության մեջ է | 01. 01. 2003 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, թողարկման տարեթիվը՝ «2003», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» և «ՔՍԱՆ ԴՐԱՄ» բառերը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «20 ԴՐԱՄ», զարդանախշեր:

Էսքիզների հեղինակ՝ Կարապետ Աբրահամյան:

Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

## 20 dram

| | |
|---|---|
| Year of issue | 2003 |
| Metal | copper plated steel |
| Weight | 2,75 g |
| Diameter | 20,5 mm |
| Edge | even |
| In circulation since | 01. 01. 2003 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, year of issue "2003", inscriptions "CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA" and "TWENTY DRAM" in Armenian.

Reverse: nominal value "20 DRAM", ornament.

Designed by Karapet Abrahamyan.

Minted in the Mint of Poland.




## 50 դրամ

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 2003 |
| Մետաղը | արույրապատ պողպատ |
| Քաշը | 3,5 գ |
| Տրամագիծը | 21,5 մմ |
| Դրամատուրքը | ատամնավոր |
| Շրջանառության մեջ է | 31. 03. 2003 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, թողարկման տարեթիվը՝ «2003», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» և «ՀԻՍՈՒՆ ԴՐԱՄ» բառերը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «50 ԴՐԱՄ», զարդանախշեր:

Էսքիզների հեղինակ՝ Կարապետ Աբրահամյան:

Հատվել է Լեհաստանի և Ֆինլանդիայի դրամահատարաններում:

## 50 dram

| | |
|---|---|
| Year of issue | 2003 |
| Metal | brass plated steel |
| Weight | 3,5 g |
| Diameter | 21,5 mm |
| Edge | ribbed |
| In circulation since | 31. 03. 2003 |

Obverse: the coat of arms of the Republic of Armenia, year of issue "2003", inscriptions "CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA" and "FIFTY DRAM" in Armenian.

Reverse: nominal value "50 DRAM", ornament.

Designed by Karapet Abrahamyan.

Minted in the Mint of Poland and the Mint of Finland.




# 100 դրամ

| | |
|---|---|
| Թողարկման տարեթիվը | 2003 |
| Մետաղը | նիկելապատ պողպատ |
| Քաշը | 4,0 գ |
| Տրամագիծը | 22,5 մմ |
| Դրամատուրքը | ատամնավոր |
| Շրջանառության մեջ է | 31. 03. 2003 թ. |

Դիմերես՝ ՀՀ զինանշանը, թողարկման տարեթիվը՝ «2003», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» և «ՀԱՐՅՈՒՐ ԴՐԱՄ» բառերը:

Դարձերես՝ անվանական արժեքը՝ «100 ԴՐԱՄ», զարդանախշեր:

